

ԵՂԵՌՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՏԱՃԱՐՆԵՐԻ ԴԵՄ, ԱՆԴՈՒՆ ԿՈՂՈՊՏՎՈՒՄ ԵՆ ՔԱՐԵՐԸ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշումով, 1965թ. հայտարարված էր բովանդակ աշխարհի մեջ պատմական հուշարձանների պահպանության տարի: Հայաստանի մեջ այդ նպատակին նվիրված մնալուն ընկերություն կա արդեն, որի փոխնախագահը, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը, «Նաիրիին» ուղարկել է այս պատկերագրող հոդվածը, որ կարելի է կարդալ առանց հուզումի և զայրույթի: Այս առիթով հայտնենք, որ եթե մտավորական մեր ընթերցողներից որևէ մեկը ուզենա օտար լեզվով թարգմանել այս հոդվածը, ինչ որ մեծապես փափագելի է՝ և հրատարակել տեղական արաբերեն կամ ֆրանսերեն թերթում, սիրով կտրամադրենք այս հոդվածը և լուսանկարները: Սեղանիս վրա են արտասահմանից ստացված բազմաթիվ լուսանկարներ: Նայում եմ գուժկան այդ փաստաթղթերին ու սիրտս ճկվում է, հոգիս փրկվում: Բանականությունս չի հաշտվում այն բանի ետև, որ մեր լուսավոր ու քաղաքակիրթ օրերում էլ վայրագությունները կարող են շարունակվել: Չես ուզում հավատալ, սակայն, ցավոք սրտի, դա անժխտելի փաստ է, այդ մասին են վկայում սեղանիս դրված բոթաբեր լուսանկարները:

Կես դար առաջ տեղի ունեցավ ահավոր մի հանցագործություն, որը ցնցեց ամբողջ աշխարհը: Գլխովին սրի մատնվեց Արևմտյան Հայաստանի ընդարձակ տարածության վրա դարեր շարունակ ապրող խաղաղ ու շինարար մի ժողովուրդ և նրա այն մասը, որ կարողացավ փրկվել յաթաղանից, տեղահան եղավ, ցրվեց աշխարհով մեկ... Չկան այլևս հայկական բնակավայրեր այն ավանդական հողերում, որտեղ հայ ժողովուրդն ապրեց իր դժվարին, հերոսական պատմությունը: Սակայն այնտեղ մնացին նախնիների սուրբ գերեզմանները, վանքերն ու տաճարները, անառիկ ամրոցներն ու դարերի ընթացքում իրականացված բազում այլ կառուցվածքներ, լուռ վկաները ստեղծագործ աշխատանքի: Նհաշիվ են քաղաքակիրթ աշխարհին երբեմն լայն ծանոթ հայկական պատմաճարտարապետական մեծարվեստ հուշարձանները: Դժվար է դրանք բոլորը մտաբերել ու հիշատակել, սակայն կան անուններ, որոնք արյամբ միահյուսված են հայ ժողովրդի պատմությանը: Ինչպե՞ս մոռանալ Անին, միջնադարյան հայ ճարտարապետության հոյակապ հուշարձանների այդ հանրածանոթ բացօթյա թանգարանը, որ փռված է Ախուրյանի աջ ափին: Չափազանց շատ են հուշարձանները նաև Անիի շրջակայքում: Նրանք ծվարել են խոր-խոր ձորերի մեջ ու թառել բարձունքներին՝ ներդաշնակելով բնության հետ ու կազմելով նրա անբաժանելի մասը: Դրանց թվին են պատկանում Խժկոնքի հոյակապ խումբն ու Յոթմուսի վանքը, Տիգնիսի ու Մաղասբերդի անառիկ ամրոցները, Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին ու բերդի իր միջնադարյան ամրություններով, հայ ճարտարապետության անզուգական գոհար Տեկորի տաճարը, Մրենի եկեղեցին, Բագավանի խումբը և շատ-շատեր: Հնարավոր է արդյոք չհիշատակել աշխարհահռչակ Աղթամարի տաճարը, հայ ճարտարապետության ու քանդակագործության արվեստի այդ չնաշխարհիկ կոթողը, Նարեկավանքն ու Վարագավանքը, Ս. Բարդուղիմեոսի վանքն ու Մշո Առաքելոց եկեղեցին, Վանն ու Կարինը, Բաբերդն ու Խարբերդը, Կիլիկյան Հայաստանի քաղաքներն ու ամրոցները, որոնց անուններն այնքան անխզելիորեն կապված են հայ ժողովրդի ազատության ու անկախության համար մղած հերոսական պայքարի պատմությանը: Մի օրինական հետաքրքրություն մշտապես կրծում է մեր սրտերը, իսկ ի՞նչ վիճակի մեջ են այժմ նվիրական այդ հուշարձանները: Ահա այդ հարցին է, որ մասամբ (քանի որ ձեռքս են ընկել լոկ որոշ հուշարձանների վերաբերող լուսափաստաթղթեր) պատասխանում են

տրամադրությանս տակ գտնվող լուսանկարները: Բավական է դրանք համեմատել մեր թանգարաններում պահվող ավելի հին լուսանկարների հետ, որպեսզի պարզ լինի պատկերը: Ձեռքս եմ վերցնում Խծկոնքի արդի վիճակը պատկերող մի լուսանկար. ցնցվում եմ ամբողջ էությամբ: Մի՞թե այս է մնացել ճարտարապետական այն հոյակապ համակառույցից, որ յուրաքանչյուր հայի հպարտությունն էր կազմում: Հինգ եկեղեցիներից բաղկացած խումբը (որի պատճառով Խծկոնքի խումբը թուրքերեն նաև Պեշքիլիսե էր կոչվում) այնքան ներդաշնակ ու համակերպ էր տեղադրված Տեկորի գետակի գեղատեսիլ կիրճում, որ կարծես շրջակա ժայռերից էր սերված նրա յուրաքանչյուր կառուցվածքը: Մի մեծ ժայռի վրա, գահավեժ գառիթափի եզրին, կողք-կողքի կանգնած էին իրենց ձևերով տարբեր Ս.Ստեփանոս, Ս.Կարապետ, Ս.Աստվածածին և Ս.Սարգիս եկեղեցիները՝ բոլորը կառուցված Անիի թագավորության շրջանում՝ 10-11-րդ դարերում: Առանձին մի ծերափ վրա հաղթականորեն վեր էր խոյանում պարզ ու գեղեցիկ ձևեր ունեցող հինգերորդ եկեղեցին կարծես բուսած նույն ժայռից: Չափազանց ամուր էին կառուցված այդ հինգ եկեղեցիները և հետևաբար վերջին կես դարի ընթացքում չէին կարող քանդվել բնական ճանապարհով, այն էլ հիմնահատակ: Կասկածից վեր է, որ դրանք քանդված են միտումնավոր կերպով, մեծ ճիգ ու ջանքի գնով: Իմ ձեռքին երկու լուսանկար է: Դրանք պատկերում են մեր ժողովրդի պատմության մեջ անփառունակ համբավ վայելող Վեստ-Սարգիսի կողմից 1027 թվականին կառուցված Ս.Սարգիս եկեղեցին: Առաջինում՝ լուսանկարված դարիս սկզբին, տեսնում ենք այդ չնաշխարհիկ կոթողն իր անկրկնելիորեն համաչափ և գեղեցիկ ձևերով, որպես մի հեռավոր արձագանք հայ ճարտարապետության գլուխգործոց Չվարթնոցի: Հաջորդ լուսանկարը պատկերում է նույն հուշարձանի արդի վիճակը՝ հոշոտված բիրտ գործիքների օգնությամբ, որոնց հետքերը ճանաչվում են հեշտությամբ: Ակնհայտ է, որ հանցագործները երկար են չարչարվել Խծկոնքի խմբի այս վերջին եկեղեցին ևս տապալելու համար: Սկզբում քչփորել են պատերի ու քիվերի վերին մասերը, հետո սկսել են կտրել գետնախարիսխը՝ հիմքերից անջատելու նպատակով: Սակայն հոգնե՞լ են եկեղեցու արտակարգ ամուր լինելու, թե՞ մեկ ուրիշ պատճառով, որ լքել, կիսատ են թողել իրենց նենգ մտադրությունը: Կարևոր շատ ուրիշ հուշարձաններ են ավերված ու ոչնչացված Անիի շրջակայքում: Լուսափաստաթղթերը վկայում են, որ հիմնահատակ ավերված է հայկական վաղ քրիստոնեական ճարտարապետության հանրահայտ գանձերից մեկը՝ Տեկորի տաճարը (5-6 դդ.): Ավերված ու պղծված է Աշոտ Ողորմածի գերեզմանը, «Ղոշեր» կոչված հաղթական մարը Հռոմոսի վանքում: Գոյություն չունի այլևս Շիրակավանի (Երազգավորսի) եկեղեցին՝ կառուցված 10-րդ դարի սկզբին Սմբատ Բագրատունի թագավորի օրոք: Անիի շրջակայքում գտնվող հուշարձաններից մեկ ուրիշը՝ Մրենի եկեղեցին (7-րդ դար), նույնպես ենթարկվել է մասնակի «վիրահատման», ի հարկե, ոչ բարի նպատակով: Դրանում համոզվելու համար բավական է նայենք հուշարձանի նոր լուսանկարին՝ կատարված ընդամենը մեկ տարի առաջ: Ակնհայտ է, դարիս սկզբին կատարված լուսանկարում եկեղեցու հարավարևելյան անկյունը առողջ էր, անեղծ: Իսկ հիմա նա փլված է: Մենք՝ հնագետներս, շատ լավ կարողանում ենք տարբերել ինքն իրեն տեղի ունեցած փլումը հարկադրականից և տվյալ դեպքում ոչ մի կասկած չի կարող լինել, որ տեղի է ունեցել վերջինը: Մինչև այժմ մենք խոսում էինք հայկական այն հուշարձանների մասին, որոնք գտնվում են Անիի շրջակայքում, նրանից 5-ից մինչև 40-45 կիլոմետր հեռավորությամբ: Իսկ ի՞նչ վիճակի մեջ են միջնադարյան Հայաստանի մեր փառապանծ մայրաքաղաքի, հայ ճարտարապետության գոհարները, քաղաքակիրթ ողջ աշխարհին հանրածանոթ այդ բացօթյա թանգարանի տարածքում գտնվող հուշարձանները: Նախքան այդ հարցին կոնկրետ փաստաթղթերով պատասխանելը, նշենք, որ մի կաշկանդիչ հանգամանք կա, որը խանգարել է նրանց

Նկատմամբ նույնպիսի հրեշավոր «գործունեություն» իրականացնել,ինչ իրականացվել է Խժկոնքի, Մրենի և Անիի շրջակայքի այլ հուշարձանների նկատմամբ, որոնք մեր աչքից հեռու են, ծվարած են բլուրների հետևում, կամ խոր-խոր ձորերի մեջ: Բանն այն է, որ Անին, մեր ափից տեսանելի է, ուստի ամեն մի չարանենգ գործունեություն կարող է հայտնի դառնալ մեզ: Գիտենք, օրինակ, որ տարիներ շարունակ Անին վերածվել է մի կատարյալ քարհանքի: Հավանաբար շինարարության համար օգտագործելու նպատակով այստեղից տարվել են քարեր, որոնք կարող էին պատկանել այս կամ այն հուշարձանին: Սմբատյան պարիսպների մեզ համար անտեսանելի, դեպի հյուսիս ուղղված երեսից, հատկապես Գայլիձորի հատվածում, ինչպես վկայում են մեր տրամադրության տակ գտնվող լուսանկարները, պոկվել են մեծ քանակությամբ սրբատաշ քարեր: Չգալիորեն կրճատվել է նաև նույն պարիսպների բարձրությունը: Այդ մասին է վկայում թեկուզ Անիի քաղաքանշանի (Ավագ դռան մոտ) բարձրաքանդակի նոր լուսանկարը: Մի քանի տասնյակ տարի առաջ նրանից վեր 6-7 շարք կար, իսկ հիմա տեսեք, թե ինչ է մնացել: Կես դար ի վեր թողնված լինելով անխնամ ու անօգնական վիճակում, առանց կանխարգել ամրացումների կամ նորոգումների, որոշ հուշարձաններ խարխլվում ու փլվում են, ինչպես, օրինակ, Ս. Փրկիչ եկեղեցին: Մեր ափից գորեղ հեռադիտակով նայելիս դժվար չէ համոզվել, որ նույն տխուր վախճանն է սպասում նշանավոր Հովվի եկեղեցուն՝ միջնադարյան հայ ճարտարապետության անկրկնելի գոհարներից մեկին, որ հազիվ է կանգնած ու գտնվում է հոգևվարքի մեջ: Կերը, կոնկրետ լուսավավերագրերի հիման վրա մենք խոսեցինք լոկ առանձին հուշարձանների կամ նրանց խմբերի մասին: Արժե բերված փաստերին ավելացնել մի քանի խոսք հայկական նախկին որոշ քաղաքների վիճակի մասին: Ինչպես վկայում են մեր ձեռքի տակ գտնվող սահմանափակ լուսանկարները, նրանց որոշ մասը հայերի կես դար առաջ կատարած գաղթի հետևանքով աստիճանաբար ավերվել ու անմարդաբնակ է դարձել: Տեսեք, թե ինչ վիճակի մեջ է այժմ Հին Բայազեդը, այն բնակավայրը, որ առաջացել էր հայկական նշանավոր Դարույնք ամրոցի մոտ: Հաջորդ լուսանկարները պատկերում են իմ հայրենի Վան քաղաքը, ոչ թե Այգեստանը, այլ նախկինում պարիսպներով շրջապատված այսպես կոչված, Քաղաքամեջը: Երկուսն էլ լուսանկարված են նշանավոր Վանա բերդի բարձունքներից, մեկը՝ դար առաջ, իսկ մյուսը՝ վերջերս: Երբեմնի ծաղկուն, վաճառաշահ ու ոսկեձեռիկ արհեստավորներով փառաբանված այս քաղաքից միայն մոխրակույտեր են մնացել: Հիմա պարզ է դառնում, թե ինչու տասնամյակներ ի վեր Թուրքիայի արևելյան մասը, այն, որ կես դար առաջ մեծապես բնակեցված էր հայերով ու այժմ համարյա ամայի է, ինչպես վկայում են իրենց գրքում չէիս նշանավոր ճանապարհորդներ Գանգելկան ու Չիկմունդը, մի ժամանակ հանդիսանում էր «արգելված հող» ու մատչելի չէր օտարերկրացիների այցելության համար: Դրա պատճառներից մեկը երևի այն էր, որ հիշատակված ընդարձակ հողատարածությունների վրա կատարվում էր մի սև գործ՝ հայ ժողովրդի պատմության հետ սերտորեն կապված կարևորագույն հուշարձանների պլանաչափ ու սիստեմատիկ ոչնչացում: Նրանց օրինական տերերի նկատմամբ կես դար առաջ իրականացած տիրահռչակ եղեռնը հետագա տարիների ընթացքում յուրօրինակ կերպով շարունակվեց անօգնական մնացած հուշարձանների նկատմամբ: Ասում են՝ հիմա դրությունը մի քիչ փոխվել է: Իրենց խարխլված ու մշտապես իմպերիալիստական գորեղ երկրների ողորմածությունից կախված տնտեսությունը կարգի բերելու համար դուլարներ են հարկավոր և գուցե այդ է ստիպում Արևմտյան Հայաստանի մեր հուշարձանները բացել օտարների այցելության համար: Մենք միայն ի սրտե ողջունել կարող ենք այդ մտադրությունը, եթե իսկապես այն իրականացվի, հույս ունենալով, որ գուցե ի թիվս այդ այցելուների մի օր էլ մեզ վիճակվի տեսնել մեր ավանդական երկիրը, համբուրել մեր պապերի

սրբազան շիրիմներն ու մամռոտած, կիսավեր նշխարները: Իսկ այժմ, որպես այդ սրբազան նշխարների օրինական ժառանգորդներ, մենք չենք կարող մեր զայրույթը չհայտնել այն ոճրագործությունների առթիվ, որոնց չնչին փաստերը բերվեցին այս փոքրածավալ հողվածում: Օգտվելով առիթից, որ Միավորված ազգերի Կազմակերպության օրգան «ՅՈՒՆԵՍԿՕ»-ն 1965 թվականը ամբողջ աշխարհում հայտարարել է հուշարձանների պահպանության տարի, մենք մեր բողոքի ձայնն ենք բարձրացնում հայ ժողովրդի պատմաճարտարապետական հուշարձանների ոչնչացման փաստերի առթիվ և վստահ ենք, որ մեր հայրենակիցները արտասահմանում ու աշխարհի ազնիվ մարդիկ մեզ հետ համախոհ կլինեն:

Երևան, 10 հունվար, 1966,

***տպագրված է «Նաիրի»-ում, Բեյրութ,
վերաշարադրված է արդի ուղղագրությամբ***